ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ (ՆԵՐԱՌՅԱԼ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ) ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԻՆՔՆԱՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ՁԵՎ «FATCA»[1] ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ[2]

Խնդրում ենք հերթով լրացնել բոլոր կետերը, եթե կետերի վերաբերյալ մեկնաբանություններում այլ բան նշված չէ

1.	Ազգանուն, անուն	
2.	Ծննդյան վայրը (նշեք միայն երկիրը)	▫ Հայաստան ▫ ԱՄՆ ▫ Այլ, նշել երկիրը_____ **<u>Հայաստան</u>**
3.	Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ	▫ ՀՀ նույնականացման քարտ ▫ Կառավարության մարմնի կողմից տրված այլ փաստաթուղթ (անվանումը) Համար Տրման ամսաթիվ Տրման երկիր
4.	Քաղաքացիությունը (նշեք բոլոր երկրները, որոնց քաղաքացին հանդիսանում եք)	▫ Հայաստան ▫ ԱՄՆ ▫ Այլ, նշել բոլոր երկրները_____ ▫ Քաղաքացիություն չունի
5.	Տեղեկություն հարկային ռեզիդենտության կարգավիճակի մասին՝ հարկային ռեզիդենտության երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան, (նշեք բոլոր այն երկրները, որտեղ Դուք հանդիսանում եք հարկային ռեզիդենտ և ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում)): Եթե Դուք ԱՄՆ-ի հարկային ռեզիդենտ եք, խնդրում ենք նշել անունը և ազգանունը անգլերեն լեզվով՝ անձը հաստատող փաստաթղթերին համապատասխան:	▫ Հայաստան, ՀՎՀՀ ▫ ԱՄՆ, ՀՎՀՀ (SSN, ITIN, ATIN)[3] ▫ Ձև[4] W-9 ներկայացված է ▫ ՀՎՀՀ այլ երկրի (նշել երկիրը)

1 «FATCA» – (Foreign Account Tax Compliance Act) – ԱՄՆ օրենքը «Օտարերկրյա հաշիվների հարկման մասին»

2 Տվյալ ձևը նախատեսված է FATCA նպատակներով ֆիզիկական անձանց իդենտիֆիկացման համար և ստեղծված է ԱՄՆ, Գանձապետարանի §1.1471-3(c)(6)(v) ակտի և Հայաստանի և ԱՄՆ-ի միջև միջկառավարական համաձայնագրի համապատասխան

3 ԱՄՆ-ում ՀՎՀՀ-ները բաժանվում է հետևյալ տեսակների. SSN-Սոցիալական ապահովության համար, EIN-Գործատուի նույնականացման համար, ITIN-Ֆիզիկական անձ հարկ վճարողի հաշվառման համար, ATIN-ՀՎՀՀ երեխաների համար, որոնց որդեգրումը ձևակերպվում է ԱՄՆ-ում, PTIN-Հարկային հաշվետվություն կազմողի ՀՎՀՀ):

4 ԱՄՆ հարկային ծառայության ձև, որ օգտագործվում է վճարումն ստացողի կարգավիճակի որոշման համար: Ձև W-9-ը օգտագործվում է ԱՄՆ հարկային ռեզիդենտի կողմից իր ՀՎՀՀ-ն բացահայտելու համար (տեղակայված է http://www.irs.gov/pub/irs-pdf/fw9.pdf):

6.	Եթե որպես ծննդավայր նշած է ԱՄՆ, իսկ որպես 5-րդ հարցի պատասխան նշած չէ ԱՄՆ, ապա խնդրում ենք ներկայացնել հետևյալ փաստաթղթերից որևէ մեկը, ինչպես նաև հաստատեք, որ Դուք չեք հանդիսանում ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ հարկային ռեզիդենտ:	▫ ԱՄՆ քաղաքացիությունից հրաժարվելու պատճառի գրավոր բացատրություն, կամ _____ _____ ▫ Գրավոր բացատրություն, թե ինչ պատճառով չի տրվել ԱՄՆ քաղաքացիություն ծննդյան պահին _____ _____ ▫ ԱՄՆ քաղաքացիության կորստի մասին տեղեկանքի պատճեն (ԱՄՆ Պետական դեպարտամենտի հյուպատոսական գործերի բյուրոյի DS 4083 Ձևով) Եվ հաստատեք՝ ▫ Սույնով հաստատում եմ, որ չեմ հանդիսանում ոչ ԱՄՆ քաղաքացի, ոչ ԱՄՆ հարկային ռեզիդենտ
7.	Եթե բանկային հաշվի սպասարկման դիմումում Դուք նշել եք ԱՄՆ-ում գտնվող փոստային կամ բնակության հասցե, կամ ԱՄՆ հեռախոսահամար կամ առկա են ԱՄՆ-ում գտնվող հաշվին[5] միջոցներ փոխանցելու հանձնարարականներ,կամ առկա է հաշիվը կառավարելու գործող լիազորագիր Ձեր կողմից տրված անձի , ում հասցեն գտնվում է ԱՄՆ-ում և որպես 5-րդ հարցի պատասխան նշել եք այլ երկիր (ոչ ԱՄՆ), ապա հաստատեք, որ Դուք չեք հանդիսանում ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ հարկային ռեզիդենտ	▫ Սույնով հաստատում եմ, որ չեմ հանդիսանում ոչ ԱՄՆ քաղաքացի, ոչ ԱՄՆ հարկային ռեզիդենտ

1. Հաստատում և ստորագրում

Հավաստիացնում եմ, որ սույն ձևում նշված տեղեկությունները ամբողջական են, հավաստի և համապատասխանում են իրականությանը:

Հասկանում եմ, որ պատասխանատվություն եմ կրում կեղծ և գիտակցաբար սխալ տրամադրված տեղեկությունների համար՝ համաձայն գործող օրենսդրության:

Հասկանում եմ, որ իմ կողմից սխալ կամ թերի տեղեկություններ տրամադրելու դեպքում, Բանկը կարող է կորուստներ կրել, և հասկանում եմ, որ Բանկը կարող է այդ կորստների փոխհատուցում գանձել ինձանից:

Ներկայացված տեղեկությունների փոփոխության դեպքում պարտավորվում եմ անհապաղ տեղեկացնել Բանկին, սակայն ոչ ուշ քան փոփոխությունը տեղի ունենալուց հետո 30 օրվա ընթացքում և ներկայացնել հավաստող փաստաթղթերը:

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը Բանկին FATCA-ի պահանջների պահպանման նպատակով իմ անձնական տվյալները՝ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը և ծննդավայրը, քաղաքացիությունը, անձը հաստատող փաստաթուղթը, ՀՎՀՀ-ն, բնակության վայրը (գրանցման և փաստացի բնակության), հեռախոսահամարը, ինչպես նաև հարցաթերթիկում նշված այլ տեղեկությունները մշակելու համար, ներառյալ՝ անձնական տվյալների հավաքագրումը, գրանցումը,

5 Հաշվետիրոջ՝ վճարումներ կատարելու հանձնարարականներ (մշտական հանձնարարականներ)՝ տրված որոշակի ժամանակահատվածի համար, որոնք ենթակա կատարման առանց հաշվետիրոջ որևէ լրացուցիչ հրահանգների (Մենք հասկանում ենք, որ տվյալ պահին Բանկը չի տրամադրում նշված ծառայությունը):

համակարգումը, կուտակումը, պահպանումը, ճշտումը (թարմացումը, փոփոխումը), հանումը, օգտագործումը, արգելափակումը, ջնջումը և ոչնչացումը ավտոմատացված միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց և այդ տվյալների՝ օտարերկրյա հարկային մարմիններին՝ այդ թվում ԱՄՆ հարկային ծառայությանը (IRS) կամ օտարերկրյա հարկային գործակալներին փոխանցումը (տարածումը, տրամադրումը, հասանելիության ապահովումը), ինչպես նաև տալիս եմ իմ համաձայնությունը նշված անձանց իմ գործառնությունների, գործարքների, հաշիվների և ներդրումների մասին տեղեկություններ փոխանցելու համար:

Հաճախորդի ստորագրություն **21/07/21**

_____

Սույն ձևի առանձին դաշտերի ճիշտ լրացման համար, խնդրում ենք վերլուծել ստորև ներկայացված լրացուցիչ տեղեկություններ:

1. FATCA օրենսդրության Ընդհանուր տեղեկություններ

FATCA - ԱՄՆ օրենքը ,Օտարերկրյա հաշիվների հարկման մասինե, որն պարտավորեցնում է բոլոր ոչ ամերիկյան ֆինանսական հաստատություններին իդենտիֆիկացնել հաճախորդներին և նրանց հաշիվների մասին տեղեկատվություն փոխանցել ԱՄՆ հարկային ծառայությանը (Internal Revenue Service, IRS):

Բանկի կամ Բանկի հաճախորդների կողմից FATCA-ի պահանջները չկատարելու դեպքում նախատեսված է պատժիչ միջոցների կիրառում:

Օրենքի գործողության և դրա կիրառման, ինչպես նաև հարկային ռեզիդենտի կարգավիճակի հետ կապված հարցերի դեպքում, խորհուրդ ենք տալիս խորհրդակցել մասնագիտացած հարկային խորհրդատուի հետ:

2. ԱՄՆ հարկային ռեզիդենտության որոշումը

ԱՄՆ հարկատու-ֆիզիկական անձե ասելով պետք է հասկանալ ԱՄՆ քաղաքացի կամ ԱՄՆ հարկային ռեզիդենտ:

Ընդհանուր կանոնի համաձայն, Դուք կարող եք համարվել ԱՄՆ հարկային ռեզիդենտ եթե՝

- Ծնվել եք ԱՄՆ-ում, կամ
- Հանդիսանում եք ԱՄՆ քաղաքացի կամ ունեք ԱՄՆ-ի ,գրին քարտե, կամ
- Համապատասխանում եք էական ներկայության չափանիշին: Նշված չափանիշին համապատասխանելու համար, անհրաժեշտ է որպեսզի Դուք ֆիզիկապես գտնվեք ԱՄՆ-ում առնվազն՝
  - 31 օր ընթացիկ տարվա մեջ, և
  - 183 օր երեք տարվա ընթացքում, որը ներառում է ընթացիկ տարին և անմիջապես նախորդող երկու տարիները՝ հաշվի առնելով՝
    - Ձեր՝ ընթացիկ տարում ԱՄՆ-ում գտնվելու բոլոր օրերը,և
    - Ձեր՝ ընթացիկ տարվան նախորդող առաջին տարում ԱՄՆ-ում գտնվելու օրերի 1/3-ը, և
    - Ձեր՝ ընթացիկ տարվան նախորդող երկրորդ տարում ԱՄՆ-ում գտնվելու օրերի 1/6-ը:

*Օրինակ: 2013թ. Դուք ԱՄՆ տարածքում անցկացրել եք 130 օր, 2012թ. – 120 օր, 2011թ. – 120 օր: Այսպիսով հաշվարկը կիրականացվի հետևյալ կերպ. (130 + 120*1/3 + 120*1/6)=190. Քանի որ, օրերի ընդանուր քանակը գերազանցում է 183 օրը, և ընթացիկ տարում Դուք ԱՄՆ-ում ացկացրել եք 31 օրից ավել, ապա 2013 թ. Դուք կճանաչվեք ԱՄՆ հարկային ռեզիդենտ:*

Լրացվում է բանկի աշխատակցի կողմից

Հաճախորդի FATCA կարգավիճակը	▫ ԱՄՆ հարկատու ֆիզիկական անձ ▫ Ոչ ԱՄՆ հարկատու ▫ Անբարեխիղճ հաշվետեր *Հաճախորդի կարգավիճակը պետք է որոշվի կամ ավտոմատացված համակարգի միջոցով՝ հաճախորդի պատասխանների հիման վրա, կամ իրավասու աշխատակցի կողմից [ԲԱՆԿԸ ՊԵՏՔ Է ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԻ ԱՅԴ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ]*
ԱԱՀ, բանկի աշխատակցի պաշտոնը	
Ամսաթիվ, ստորագրություն	_____